

Արսեն Է. Հարությունյան

ՄՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԼԵՀԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ*

«Բան է առաջին սկիզբն ամենայն գործոց
մարդկայնոց և այլք ամենայն սկզբունք նոցա
հնազանդին բանի, բայց զանազանապէս»¹:
Ստեփանոս Լեհացի

Մուտք

17-րդ դարի հայոց հոգևոր ու մշակութային կյանքում մեծ է նշանավոր հոգևորական, աստվածաբան, թարգմանիչ, բանասեր ու փիլիսոփա Ստեփանոս վարդապետ Լեհացու դերը: Ծնվելով Լվովում՝ նա 1630-ական թթ. տեղափոխվել է Վաղարշապատ, ձեռնադրվել վարդապետ և իր կյանքը նվիրել հայ եկեղեցուն՝ Ս. Էջմիածնում ու մերձակա վանքերում ծավալելով կրոնագիտական բուռն գործունեություն: Ասվածի «լուռ վկան» է նրա տապանաքարը, որը գտնվում է Ս. Հռիփսիմե վանքի միաբանական գերեզմանոցում:

Անդրադարձը Ստեփանոս վարդապետի կյանքին ու հատկապես տապանաքարի արձանագրության վերծանմանը, պայմանավորված է նրա մահվան տարեթվի շուրջ աղբյուրներում առկա վկայությունների հակասականությամբ, ուստի սույն հոդվածի խնդրո առարկան նախ և առաջ տապանագրի նորովի վերծանությունն է, ուր կձշտենք թվականն ընդգրկող հատվածը՝ փորձելով տալ վերջնական ու սպառնիչ պատասխան:

1. Կյանքն ու գործունեությունը

«Քաջ հռետորի», «անհաղթ փիլիսոփայի» և «ներհուն թարգմանչի» համբավ վաստակած Ստեփանոս վարդապետ Լեհացին (Լվովցի, Իլովացի) ծնվել է 17-րդ դարի սկզբին Լվովում: Քաջ տիրապետելով լատիներենին ու լեհերենին՝ կատարել է մի շարք թարգմանություններ, որոնցից ու-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 17.05.2013:

1 Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք՝ համառոտաբար իբր սահմանօրէն արտադրեալք և հաւաքեալք ըստ այբուբենից, աշխատասիրութեամբ Լեհացի Ստեփանոսի բանասիրի, Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) ձեռ. 110, 384ա:

շագրավ են հատկապես «Հայելի վարուց» կամ «Հարանց Վարք»² բարոյախիտառական գրույցների ժողովածուն, Փիլիպոս Ա Աղբակեցի (1632-1655) կաթողիկոսի ցանկությամբ և նրա հաջորդ Հակոբ Դ Ջուղայեցու (1655-1680) օրոք՝ 1660 թ. թարգմանած հրեա պատմիչ Հովսեպոս Երրայեցու (Փլաբիոսի) «Յաղագս պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցոց և աներելոյ Երուսաղէմի»³ երկը, Արիստոտելի կամ ինչպես ոմանք են կարծում՝ Պրոկղի⁴ «Ի գրոց պատճառաց»-ը⁵, Դիոնեսիոս Արիստոտելի երկերը, հայ տպագրիչ Ոսկան Երևանցու պատվերով թարգմանած Աստվածաշնչի «Իմաստություն Սիրաքայ»⁶ մասը և այլ գործեր: Այս ամենի կողքին, սակայն, առանձնանում է Արիստոտելի «Մետաֆիզիկա»-յի թարգմանությունը⁷, որը նախկինում թարգմանվել էր միայն արաբերեն և լատիներեն:

17-րդ դարի պատմագիր Առաքել Դավրիժեցին «Գիրք պատմութեանց»-ի ԻԹ. (29) գլխում անդրադառնալով Հայաստանում գիտական մտքի զարգացմանը, ժամանակի հայտնի գիտնականների՝ Մովսես Մյունեցու, Խաչատուր Կեսարացու, Միմեոն Ջուղայեցու անուններին զուգահեռ հիշատակում է նաև Ստեփանոս Լեհացուն: Նկարագրելով վերջինիս գործունեությունը՝ պատմիչը շեշտում է հատկապես նրա թարգմանական վաստակը. «Ստեփանոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ, և պարկեշտ վարուք... թարգմանեաց չորս գիրք ի Լատին գրոյ և ի լեզուէ՝ ի Հայ գիր և ի լեզու»⁸: Նախկին թարգմանությունների լեզուն անմատչելի էր դարձել ընթերցողներին, ուստի դրանց նորովի թարգմանություններն ու մեկնությունները միտված էին օգնելու իր ժամանակի ու ապագա սերունդներին⁹:

Ստեփանոս Լեհացին հայտնի է նաև իր փիլիսոփայական հարցադրում-

2 Գիրք հայելի վարուց, որ ասի Հարանց վարք, Մարսիլիայ, 1702: Գ. Տեր-Մկրտչյանը նշում է, որ «Հարանց Վարք»-ը թարգմանվել է Ստեփանոս Լեհացու ձեռքով 1660 թվականին, լեհերենից: Տես Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Եր., 1979, էջ 162: Ավելի ուշ, **Քաարիկ Տեր-Դավթյանը** սկզբնաղբյուրների միջոցով ապացուցում է, որ «Հայելի վարուց»-ը Լեհացու առաջին թարգմանությունն է, որը թարգմանել է 1651 թ.: Տես Գ. Տեր-Դավթյան, «Հայելի վարուց»-ի հայերեն թարգմանության հարցի շուրջ, «Լրաբեր հաս.գիտ.», 1981, N 10, էջ 94:

3 Գիրք պատմութեանց Յովսեպոսի Երրայեցույ. արարեալ յաղագս պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս, և աներման Երուսաղէմի, թարգ. ի լատին բարբառոյ ի հայոց լեզու, ի ձեռն ուրումն Իլովացույ Ստեփանոսի, Վաղարշապատ, 1787:

4 ՄՄ № 1933 ձեռագրի բովանդակության մաս կազմող հիշատակարանում նշվում է. «Գիրքս այս թարգմանեաց մեզ Իլովացի Ստեփանոս վարդապետն, ի գահն Սուրբ Էջմիածին... սա մասն է Պատճառաց Գրոց... որ ասէ Արիստոտելի և կամ որպէս ոմանց թոյի, Պրոկղի, բայց շարագրութիւն սորա յաւէտ Պրոկղի յարմար երևի, քան թէ Արիստոտելի...» (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, խմբագրութեամբ Գ. Տեր-Վարդանանի, Եր., 2012, էջ 619:

5 Գրգուկ, որ կոչի պատճառաց, Կ. Պոլիս, 1750:

6 Ձեռագիրը գրվել է 1668 թ., գրչին ու ստացողը Գրիգոր Յղևեցին է, թարգմանողը՝ Ստեփանոս Լեհացին: Վերջում գետեղված է նաև Լեհացու հայտնի «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք...» փիլիսոփայական բառարանը: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանտան, Եր., 2007, ձեռ. 705, էջ 403-406:

7 Ձեռագիրը գրվել է 1675 թ., գրիչը Գրիգոր Երևանցին է, ստացողը՝ Ներսես Բարսեղյան, թարգմանողը՝ Ստեփանոս Լեհացին: Վերջինիս հիշատակարանը գետեղված է ձեռագրի 164ր էջում. «Զթարգմանիչ սորին և զլուծմանց յօրինող՝ Լեհցի Ստեփանոս բանասէրն յիշել ի Քրիստոս, յոյն բնաւի, սրտի մտօք աղաչան»: Գիրը միասյուն նտորգիր է, ցավոք, ձեռագրի սկզբնամասը թափված է: ՄՄ ձեռ. 10032:

8 Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 323:

9 Տես նույնի առաջարանում, էջ 19-20, 40:

ներով¹⁰: Այս առումով ամենից ուշագրավը նրա «Բանք իմաստասիրականը և աստուածաբանականը...» ծավալուն բառարանն է, որում տեղ են գտել փիլիսոփայական, գեղագիտական, աստվածաբանական 262 եզրերի ու հասկացությունների բացատրություններ: Ըստ բառարանը պարունակող ձեռագրերի գրչության թվականների՝ այն պետք է որ կազմված լինի 17-րդ դարի 60-ական թթ.: Այստեղ է, ուր, ըստ արվեստաբան **Մ. Ղազարյանի**, Լեհացին «իրեն դրսևորում է, որպես մատերիալիստական որոշակի դիրքերի վրա կանգնած փիլիսոփա»¹¹: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Գ. Գրիգորյանը**, առանձին ուսումնասիրության առարկա դարձնելով Լեհացու բառարանը, գտնում է, որ այն աչքի է ընկնում իր կատարելությամբ և նախորդներից տարբերվում է նրանով, որ բառ-հասկացությունների բացատրություններն անհամեմատ ընդարձակ են ու բազմակողմանի¹²:

Գալով Վաղարշապատ (հավանաբար 1636 թ.)՝ Ս. Էջմիածնի միաբանության անդամ Ստեփանոս Լեհացին Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի կողմից նախ ձեռնադրվել է քահանա, ապա ստացել վարդապետական աստիճան: Այս մասին Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ ի ժամանակին՝ յորում Նիկոլ եպիսկոպոսն Իլովայ նեղէր և վտանգէր զհայազուն ժողովորդսն՝ որ յԻլով էին, ծնողք Ստեփանոսիս՝ վասն բարեպաշտութեան և վասն ուղղափառութեան, հանեալ զսա յԻլովայ՝ առաքեցին ի սուրբ Աթոռն Էջմիածին ի ժամանակս Փիլիպոս կաթողիկոսին»¹³: Այն, որ Ստեփանոս Լեհացին աչքի է ընկել իր ունակություններով, պարկեշտությամբ, վկայում է նաև Առաքել պատմագիրը. «Ջորոյ ուսումն և զմաքրութիւն վարուց տեսանելով ամենայն վարդապետաց՝ վկայեցին առաջի Փիլիպոս կաթողիկոսին. այլ և ինքն իսկ տեսոն Փիլիպոս տեսանելով զարժանաւորութիւն նորա, կոչեաց յես գերադրական ի փառս, զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ, ետ նմա իշխանութիւն վարդապետական...»¹⁴:

Որոշ ուսումնասիրողներ (Հ. Շահխաթունյանց, Ն. Ակինյան, Ե. Մարտիկյան, Մ. Ղազարյան) գտնում են, թե Ստեփանոս Լեհացին նաև հնուտ նկարիչ էր: Մասնավորապես՝ նրան են վերագրվում մեզ հասած թվով ութ պատկեր, ինչպես նաև Էջմիածնի Մայր տաճարի ու զանգակատան որմերի որոշ նկարազարդումներ: Համաձայն Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի վկայության՝ իր ժամանակի պատկերները «...փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփանոսի Լեհացույ, և քաջ նկարչին հօր Յովնաթանու»¹⁵: Նա Ստեփանոս Լեհացու վրձնին է վերագրում Մայր տաճարի՝ Հովհաննես Մկրտչի խորանի տասներկու առաքյալների դիմանկարներն ու «Թովմայի թերահավատությունը»

10 Այս մասին մանրամասն տե՛ս **В. К. Чалоян**, История армянской философии, Ереван, 1959, с. 319–333: Տե՛ս նաև՝ **Յու. Ա. Թարվերդյան**, Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները, Եր., 1979: Տե՛ս նաև՝ **Հ. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983:

11 **Մ. Ղազարյան**, Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում. գեղանկարչություն, Եր., 1974, էջ 140:

12 Տե՛ս **Գ. Հ. Գրիգորյան**, Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը, ԳԲՀ, 1975, N 2, էջ 133–134:

13 **Առաքել Դավրիժեցի**, էջ 323:

14 Նույն տեղում:

15 Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ՝ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց** շահրիացոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. առաջին, Ս. Կաթողիկէ Էջմիածին, 1842, էջ 45:

պատկերը¹⁶: Ըստ Մ. Ղազարյանի վկայության՝ հիշյալ պատկերները պահվում են Էջմիածնի վեհարանում¹⁷: Շահխաթունյանցի վերոնշյալ ենթադրությունը զարգացրել են նաև հետագա ուսումնասիրողներից շատերը: Ն. Ակինյանը գրում է, թե Ստեփանոս Լեհացին «Լեմբերգ հետևած էր նախնաբար նաև նկարչության և ստացած ծանօթություն նկարչական արուեստին»¹⁸: Մ. Ղազարյանը, Ստեփանոս Լեհացուն վերագրելով Ս. Էջմիածնի տաճարի ու զանգակատան որմերի որոշ նկարազարդումներ, հավանական է համարում, որ նա «կարող էր և ինքը կատարել զանգակատան աշխատանքները կամ նրա ղեկավարությամբ կարող էին աշխատել նկարիչ-վարպետներ»¹⁹: Կարծում ենք՝ հիշյալ տեսակետն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ զանգակատան երկրորդ հարկը տաճարի հետ կապող կառույցի արևելահայաց որմին պահպանվել է շինարար վարպետների (ուստա Սահակ, ուստա Միվես) անունները կրող չորս առձանագրություն: Դրանցից մեկում հիշատակվում է ոսկերիչ Զաքարեն. «ՄԲ խաչս յիշատակ է ոսկերիճ Զաքարէին, որ նկարեց զանկակատունս»²⁰: Ըստ Ս. Մաղումյանի՝ Զաքարեն զանգակատան որմնանկարների հեղինակն է, որը նաև տիրապետել է քանդակագործությանը²¹: Նա վկայություններ չունի այդ որմնանկարները Լեհացու վրձնին պատկանելու վերաբերյալ:

Մեզ համար առավել համոզիչ են թվում Ա. Առաքելյանի դիտարկումները՝ արված «Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի հարցի շուրջ: Վկայակոչելով արվեստաբան Ե. Մարտիկյանի տեսակետը, թե կտավը Ստեփանոս Լեհացու գործերից է՝ ստեղծված 1651 թ.²², Առաքելյանն անդրադառնում է Լեհացու կյանքի ու գործունեության վերաբերյալ ամկա ուսումնասիրություններին, հանգելով նրան, որ «որևէ ռեալ հիմք չկա «Տիրամոր յոթ վերքը» կտավը Ստեփանոս Լեհացու



Նկ.1 «Տիրամոր յոթ վերքը» պարկերը

16 Տե՛ս նույն տեղում:

17 Տե՛ս Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 142:

18 Ն. Ակինեան, Ստեփանոս վարդապետ Լեհացի, «Հանդէս ամսօրեայ», 1912, N 1, էջ 65:

19 Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 145:

20 Մ. Ս. Մաղումյան, Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, «Էջմիածին», 1976, Ե, էջ 32:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

22 Արվեստաբան Ե. Մարտիկյանը 17-18-րդ դդ. Էջմիածնում գործած Հովնաթանյան նշանավոր նկարիչների կողքին հիշատակում է նաև Ստեփանոս Լեհացուն: Ըստ նրա՝ Լեհացու տաղանդն իր առավել վառ դրսևորումն է գտել վերոնշյալ պատկերում, որը կոչում է «Ողբ»: Համաձայն պատկերի ստորին մասում ամկա արձանագրության՝ Մարտիկյանն այն թվագրում է 1651-ով, ինչը վիճելի է, քանի որ միայն ՌՃ. (1100) թվատառերն են: Տե՛ս Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն. XVII-XIX դդ., Եր., 1971, էջ 37:

անվան հետ կապելու, առավել ևս նրան պրոֆեսիոնալ նկարիչ համարելու համար»²³:

Վերոհիշյալ տեսակետն առավել համոզիչ է դառնում, երբ ուսումնասիրում ենք Ստեփանոս Լեհացու ձեռագրագիտական վաստակը: Նա մեծ ներդրում ունի Էջմիածնի գրատան կազմավորման ու բազմաթիվ ձեռագրերի ընդօրինակման²⁴ գործում (ի դեպ, մեզ հայտնի առաջին մատենադարանապետը Ստեփանոս Լեհացու աշակերտներից Ներսես սարկավագն է²⁵), որոնց հիշատակարաններում հաճախ իբրև գրիչ²⁶, թարգմանիչ ու ստացող է հիշատակվում: Այդօրինակ վկայություններից մեկը, որ, Գարեգին Հովսեփյանի կարծիքով, պետք է որ գրված լինի Ստեփանոս Լեհացու կյանքի վերջին շրջանում, մասնավորապես՝ 1668 – 1686 թթ. միջակայքում, ոչ ամբողջությամբ պահպանված պատարագի խորհրդատետր է, որը պատկանել է նյույորքաբնակ հնահավաք և գորգավաճառ Պարոյրյանին:

Ստեփանոս Լեհացու՝ հիշյալ ձեռագրում պահպանված ինքնագիր հիշատակարանը հետևյալն է. «Զապիկար գրիչս և զստացող սորին տէր Ստեփանոս Իովացի աղաչեմ յիշել ի Ժամ զենման երկնատր գառին, ով սուրբ խորհրդածու»²⁷: Ըստ Գ. Հովսեփյանի՝ ձեռագիրն առանձնանում է նրանով, որ պարզում է, թե գրչության հետ մեկտեղ Ստեփանոսը յուրացրել էր նաև ծաղկողի արհեստը: Ի տարբերություն այն հիշատակարանների, որոնցում փաստեր չկան Ստեփանոսի նկարիչ լինելու մասին, հիշյալ ձեռագրում առկա մանրանկարները մտորելու տեղիք են տալիս: Ստեփանոս Լեհացու գրչին պատկանող մեզ հայտնի ձեռագրերից շատերի հիշատակարաններում, սակայն, կարդում ենք, թե «...զձեռն ի գործ արկեալ իմ ձեռամբս գծագրեցի և ոսկէնկար ծաղկօք և երփն երփն գունօք **գարդարեալ ետու...**»²⁸, կամ՝ «...իմ ձեռամբս գծագրեցի»²⁹ զայս Խորհրդատետրս, ի վայելումն անձին իմոյ: Եւ **ետու յարդարել ոսկէնկար ծաղկօք** և երփն երփն գունօք»³⁰ (ընդգծումները մերն են – Ա. Հ.): Այսինքն՝ ակնհայտ է, որ հիշյալ ձեռագրերի նկարագարողումը Ստեփանոս Լեհացունը չէ, ավելին՝ հիշատակարաններում նշվում է ծաղկողի՝ Սիմեոն Բաբունու անունը:

Իրավացի է Գ. Հովսեփյանը, երբ նկատում է, որ Առաքել Դավրիժեցին ևս հիշատակություններ չունի Ստեփանոս Լեհացու նկարչական կարո-

23 Ա. Առաքելյան, «Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի հարցի շուրջ, «Լրաբեր հաս. գիտ.», 1981, N 5, էջ 98:

24 Լուսանկարը հանված է՝ Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն. XVII-XIX դդ. գրքից, պատ. 1:

25 Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Եր., 1965, էջ 20:

26 ՄՄ № 1909 ձեռագրի գրիչն ու թարգմանիչը Ստեփանոս Լեհացին է: Զեռագիրը Յովսէպոս Փլաբիոսի «Պատմություն պատերազմին հրէից» աշխատությունն է, որի գրչության հիշատակարանում նշվում է. «...ես՝ Ստեփանոս Լեհացի... ի թուաբանութան հայոց ՌՃԹ. (1660) և ի հայրապետութան սրբազան տեսն Յակոբայ զայս պատմութիւն Յովսէպոսի թարգմանեցի ի լատինացոց բարբառոյ ի հայոց լեզու...»: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. 2, էջ 490:

27 Գարեգին Ա կաթողիկոս [Հովսեփյան], Էջմիածնի տաճարի նկարագարողումն ու ծաղկագրողումը ԺԷ-ԺԸ դարերում, «Նիւթեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմութեան», պրակ Ե, Անթիլիաս – Լիբանան, 1951, էջ 16:

28 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1984, էջ 211:

29 Թերևս «գծագրեցի» բառի հիմքում պետք է հասկանալ մանրանկարները Լեհացու ձեռքով գծանկարելը, որը հետո միայն նկարագարող է ծաղկողը:

30 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 336:

դուրյունների մասին: Ստեփանոսի կենսագրությունից անմիջապես հետո Դավրիժեցին ներկայացնում է Մինաս և Հակոբջան Զուղայեցի նկարիչներին, ուստի եթե Ստեփանոս վարդապետը ևս հայտնի լիներ իր նկարչական ձիրքով, ապա դժվար թե անտեսվեր պատմագրի կողմից³¹: Արվեստաբան Աստղիկ Գևորգյանը ևս 17-րդ դարի հայ մանրանկարիչների ժամանակագրական ցանկում Ստեփանոս Լեհացու անունը չի հիշատակում³²: Կարծում ենք՝ վիճահարույց այս հարցը հետագա ուսումնասիրության կարիք ունի:

1673 թ. Հառիձում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանում (ընկալված է նաև «Հարանց Վարք»-ի՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությունը) վերջինս հիշվում է իբրև Ս. Էջմիածնի վերակացու և գանձապետ. «...գիրք, որ կոչի ֆռանկաց Հարանց Վարք, որ թարգմանեալ եղև ի լատին բարբառոյ հայ բարբառ, ձեռամբ Ստեփաննոս վարդապետի Իլովացոյ, որ է վերակացու և գանձապետ ի Սուրբ կաթողիկոսարանն Էջմիածնի: Բայց զի գրեալ եղեն սա ի թուականութեանս Հայոց Ռ.-երորդի Ը.-երորդի ի Ի.-երորդի և երկրորդ թուի (1673)...»³³:

Ավելի ուշ Ստեփանոս Լեհացին հիշվում է իբրև աթոռակալ և տեղապահ: Այս մասին տեղեկություններ են պահպանվել 1625 թ. գրված ժամագրքերից մեկի կազմողի հիշատակարանում: Հույժ կարևորություն ունեցող այս հիշատակարանը վկայություններ է հաղորդում ոչ միայն Լեհացու աթոռակալության ու տեղապահության, այլև Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի մահվան և նրան հաջորդող Եղիազար Ա Այնթապցու (1681-1691) գահակալության վերաբերյալ: Ձեռագրի նորոգումը տեղի է ունեցել. «...ի թագավորութեանն պարսից Շահ-Իսմայիլի և յիշխանութեան տանս Արարատեան Զալխանի և առաջնորդութեան սուրբ ուխտիս հեզահոգի և սրբազան Յոհաննէս վարդապետի և աթոռակալութեան Սուրբ Էջմիածնի Ստեփաննոսի Իլովացոյ: Քանզի մեծ կաթողիկոսն Հայոց Յակոբ գնաց ի Կոստանդնուպոլիս վասն հոգալոյ իրաց ինչ յաղագս Սուրբ Աթոռին և ի թուին Ռ. և Ը. ի Ի. և Թ. (1680), օգոստոս ամսոյ Բ. (2), յաւուր երկուշաբթի վաղձանեցաւ... ժողովեցան ամենայն վարդապետք և եպիսկոպոսք և վանականք և մեծամեծք ի Հայոց յերևանայ և Նախչուանայ ի սուրբ Աթոռն Էջմիածին և սզացին զուօգ կաթողիկոսին և հաստատեցին զՍտեփաննոսն տեղապահ, և ինքեանք ընտրեցին զոմն վարդապետ Պետրոս անուն... և առաքեցին զնա հրաւիրակ առ Եղիազար, որ երբեմն եղև կաթողիկոս և այժմ կայ նստեալ պատրիարք ի սուրբ Երուսաղէմ, զի եկեայ է ի բարձրագահ Աթոռն ի Սուրբ Էջմիածին և նստցի Աթոռ կաթողիկոսութեան»³⁴:

Զաքարիա սարկավազի մի վկայությունից պարզվում է նաև, որ Լեհացին տեղապահի պաշտոնում նշանակվել է դեռևս Հակոբ Զուղայեցու մահից մի քանի ամիս առաջ, քանի որ 1679 թ. նոյեմբերի 14-ին, երբ վախճան-

31 Տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 13-14:

32 Տե՛ս Աստղիկ Գևորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն IX-XIX դդ., Գահիրէ, 1998, էջ 803-805:

33 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Գ, էջ 295, ձեռ. 678:

34 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթարեան, Ա. Քեօշկերեան, Եր., 2004, էջ 1049-1050, ձեռ. 507: Տե՛ս նաև՝ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Եր., 1948, էջ 676-677: Տե՛ս նաև՝ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 925:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽԱՅԻ-ՄԵԱԳՐԱՆԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

վում է Հովհաննավանքի առաջնորդ Հովհաննես վարդապետ Կարբեցին. «...էր տեղապահ ի սուրբ Էջմիածին Իլովացի Ստեփաննոս վարդապետն, որ բազում վարդապետօք և եպիսկոպոսօք եկն ի թաղումն»³⁵:

2. Տապանագրի վերծանությունը

Այն, որ Ստեփանոս վարդապետն իր կյանքի վերջին տարիները ևս անցկացրել է Վաղարշապատում, վկայում է նրա գերեզմանաքարը, որի վրա բանաստեղծական հանգավորմամբ տապանագիրն է՝ 13 տողից: Քարն ուղղանկյունաձև է, կենտրոնում քանդակված է վարդապետական գավազանը, գրերը խոշոր են, ընդգրկված ուղիղ, իսկ վերևում՝ սլաքաձև եզրագոտում: Տապանաքարը կենտրոնական մասից կտրոնված է, որի պատճառով էլ արձանագրությունը վնասվել է, սակայն նախորդ հրատարակիչների մոտ այն ամբողջական է: Հետագայում քարի կտրոնված մասը սվաղվել է, ինչը խաթարում է տապանաքարի ընդհանուր տեսքը:



Ս. Հռիփսիմեի միաբանական գերեզմանոցը վանքի արևելյան պարսպապատի երկու կողմում է: Հենց այստեղ՝ տաճարից մի քանի մետր հեռավորության վրա, ինչպես Հայր Ալիշանն է գրում՝ «թաղեալ կայ անդ և քաջ գիտնականն և թարգմանիչն Ստեփանոս վարդապետ Լեհացի կոչեցեալ, այսպիսի ունեղով տապանագիր»:

ՅԱՐԿ Ի ԴԱՄԲԱՐԱՆԻՍ ԵՂ/ԵԱԼ ՊԱՀԻ
ՄԱՐՄԻՆ/ ՄԱՔՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ/
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԸՍՏԵՓ/ԱՆՆՈՍԻ,
ՈՐ ԷՐ ՏԵՂ/ԵԱԻՆ ԻՍԿ ԼԵՀԱՑԻ/
ԱՆԻՆ Ի ԳՈՒԲՍ ԱՅՍ ԸՆԿՐԿԻ,
ՀԱԶԱՐ/ ՀԱՐԻՐ ԸՆԴ ԵՐԵՄԻ/
ԿՐԿԻՆ ՔԱՌԵԱԿ ԹԻՐ/ ՀԱՅԿԱԶՆԻ (1689),
ՈՐՔ ՀԱՆ/ԴԻՊԻՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ/
ԱՄ ԵՒ ԶԵԶ ՈՂՈՐՄԱՑԻ³⁶:

Տապանագիրը 17–18–րդ դդ. լայնորեն տարածված հայ վիմագիր բանաստեղծություններից է: Ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք է տվել հատկապես Ստեփանոս Լեհացու մահվան տարեթվի հարցը, այն դեպքում, երբ տապանագրում թվականն առկա է: Հետազոտողմասնագետները նրա մահվան տարեթիվը նշում են մոտավոր, հիմնա-

³⁵ **Ջաթարեայ Մարկաագի** պատմագրություն, հ. երրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 37:

³⁶ **Հովհ. Շահխաթունյանց**, նշվ. աշխ., էջ 272: Տե՛ս նաև՝ **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 241:

կանում 1680 – 1699 թթ. միջակայքում, սակայն առավել տարածված են 1689 թ.³⁷ և 1699 թ.³⁸:

Ըստ Մ. Չամչյանցի վկայության՝ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսն Էջմիածնում դպրատուն է հիմնում, որտեղ ուսուցիչ է կարգում Սիմեոն վարդապետ Ջուղայեցուն: Որոշ ժամանակ անց Սիմեոն վարդապետը մեկնում է Եվրոպիա, ուր և վախճանվում է 1657 թ: Սինչև Սիմեոնի մեկնելը Էջմիածին է գալիս «...ումն Ստեփաննոս անունն ի Լէոպօլիս քաղաքէ՝ վարժեալ և կրթեալ ի լեզու լատինացոց, ևս և յուսումն պէսպէս իմաստից...»³⁹: Մ. Չամչյանցն անդրադառնում է նաև Ստեփանոս վարդապետի գործունեությանն ու հատկապես կատարած թարգմանություններին և հավելում. «Եւ ինքն լեալ իբր ութսուն ամաց՝ վախճանեցաւ ի թուականութեանս հայոց ՌՃԽԸ. (1699), փոքր մի առաջ կամ յետոյ»⁴⁰: Այսինքն, ըստ Չամչյանցի՝ Ստեփանոս Լեհացին վախճանվել է մոտավորապես 1699 թվականին ութսուն տարեկան հասակում, հետևաբար պետք է որ ծնված լինի 1619 թ.:

Այլ կարծիքի է Մաղաքիա արք. Օրմանյանը. «Ստեփանոսի գործունեությունը Փիլիպպոսի օրով սկսած, ու շարունակած է մինչև անոր յաջորդին ալ մահը»⁴¹, այսինքն՝ մինչև Հակոբ Ջուղայեցու մահը, որ է՝ 1680 թ.:

Հայր Ալիշանը «Բազմավէպ» հանդեսում նշում է, թե Ստեփանոսը «...Էջմիածին եկեաց և անդ աթոռակալ եղև Յակովբայ կաթողիկոսի Դ, և տեղապահ յետ մահուան նորա, և անդ մեռաւ յամին 1681 և կայ թաղեալ ի Հռիփսիմեանց տաճարի»⁴²: Ավելի ուշ, «Կամենից. տարեգիրք հայոց»-ի ՌՃԼԴ. (1685) տարեթվի դիմաց Ղ. Ալիշանը, համառոտ նկարագրելով Լեհացու գործունեությունը, վերջում գրում է. «Յետոյ բարի վարուք և ուղղա-



Նկ. 2 Ստեփանոս Լեհացու ցապանաքարը

37 Տես Ցուցակ ձեռագրաց **Դաղեան Խաչիկ** վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 92: Տես նաև՝ **Ն. Ալիինեան**, Ստեփանոս վարդապետ Լեհացի, էջ 64: Տես նաև՝ **Մ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 141: Տես նաև՝ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, եր., 1985, էջ 135: Տես նաև՝ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 925:

38 Տես **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն, հ. Գ, եր., 1984, էջ 620: Տես նաև՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1617: Տես նաև՝ նույնի հ. Բ, կազմեցին՝ **Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաքյան**, եր., 1970, էջ 1461: Տես նաև՝ նույնի հ. Գ, կազմեց՝ **Ա. Մալխասեան**, եր., 2007, էջ 419:

39 **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 620:

40 Նույն տեղում:

41 **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2896:

42 [Ալիշան Ղ.], Ճառ ընթերցեալ ի հայկական ձմեռարանիս, տեսութիւն ի գանձ լեզուին հայոց կամ ի Ստեփանեան բառարան, «Բազմավէպ», 1852, N 5, էջ 88:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քաարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

փառութեամբ զկեանս իւր վճարեալ՝ հանգեալ ի Քրիստոս, մօտ յայսմ ամի»⁴³:

Ստեփանոս վարդապետի տապանագրում տարեթիվն անընթեռնելի է համարում Գ. Հովսեփյանը, որը նշում է, թէ «Ստեփանոսի մահուան ճիշդ թուականը չգիտենք, որովհետև եղծուած է թուականը նորա գերեզմանի արձանագրութեան մէջ, թաղուած Հռիփսիմէի վանքի արևելեան կողմը»⁴⁴:

Լեոն «Հայոց պատմության» էջերում նկարագրելով 17-րդ դարի գիտության բնագավառը՝ առաջնահերթ նշում է Ստեփանոս Լեհացու անունն ու նրա ունեցած ավանդը հայոց թարգմանական գրականության ասպարեզում: Լեհաստանում դավանափոխական շարժումներ էին ձևավորվում, իսկ լեհահայերի մեջ պետք էին հայազետներ ու զարգացած մարդիկ, ուստի Ստեփանոս Լեհացու էջմիածին ուղևորվելը, հայերեն սովորելն ու գրական գործունեություն ծավալելը մի մեծ առաքելություն էր: Ըստ Լեոնի՝ մեծանուն գիտնականը «վախճանվել է խորին ծերության մեջ, 80 տարեկան հասակում, 1689 թվականին և թաղված է Հռիփսիմէի վանքի գերեզմանատանը»⁴⁵:

Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական ժառանգությունն ուսումնասիրողներից պրոֆ. Վ. Չալոյանն իբրև նրա մահվան տարեթիվ ընդունում է 1687 թ.⁴⁶, իսկ Յու. Թարվերդյանը նշում է, որ նրա ծննդյան ու մահվան թվականը ստույգ հայտնի չէ, սակայն որոշ աղբյուրների քննությունից եզրակացնում է, որ Ստեփանոս Լեհացին «...մահացել է 1681 թ. և եթե նա իրոք «ի նքն լեալ 80 ամաց՝ վախճանեցաւ», ապա նա ծնվել է 1601 թ.»⁴⁷:

Կարծում ենք՝ Ստեփանոս վարդապետի տապանագրում մահվան թվականի անձշտությունը բխում է քարի՝ այդ հատվածում առկա եղծվածությունից: Ի տարբերություն վիճագրերում և ձեռագիր մատյաններում առավել հաճախ հանդիպող՝ հայոց մեծ թվականն ըստ մեր այբուբենի տառերի թվային համարժեքով ներկայացնելուն, հիշյալ տապանագրում այն արտահայտված է բառերով:

Հ. Շահխաթունյանցն ու Ղ. Ալիշանն անդրադառնալով տապանագրին, այն վերծանել են այսպես. «...անին ի գուրս (փոս, վիհ - Ա. Հ.) այս ընկրկի, հազար հարիւր ընդ երեսնի, կրկին բառի Կ թիւ հայկազնի...»⁴⁸ (ընդգծումը մերն է - Ա.Հ.): Ընդգծված մասն անհասկանալի է համարում նաև Ն. Ալիսյանը՝ նշելով, որ «իմաստը կը պահանջէ միատր թիւ»⁴⁹: Նա առավել ստույգ է համարում Խաչիկ վարդապետ Դադյանի կազմած ձեռագրացուցակի N 74 ժողովածուի թիվ 7-րդ միավորում տեղ գտած վկայությունը, որտեղ Ստեփանոս վարդապետի թարգմանությունները թվարկելուց հետո նշվում է, թէ վերջինս. «...վախճանեցաւ ի թվին ՌՃԼԸ (1689)»⁵⁰: Ըստ այդմ էլ Ն. Ալիսյանը, «Կ»-ն համարելով սխալ

43 [Ղ. Ալիշան], Կամենից. տարեգիրք հայոց, Լեհաստանի և Ռումենիոյ հաաստչէալ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 143-144:

44 Գարեգին Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 12-13:

45 Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք առաջին, Եր., 1969, 409-410:

46 Տե՛ս В. К. Чалоян, История армянской философии, с. 319.

47 Յու. Ա. Թարվերդյան, Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները, էջ 15:

48 Հովհ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 272, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 241:

49 Ն. Ալիսյան, Ստեփանոս վարդապետ Լեհացի, էջ 64, ծանոթ. 7:

50 Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, էջ 92, ձեռ. 74:

ընթերցում, վերծանում է «Գ» (4) և կարդում. «**ԿՐԿԻՆ ԲԱՌԻԻ Դ (4) ԹԻԻ ՀԱՅԿԱԶՆԻ**»⁵¹:

Մենք փորձեցինք մաքրել քարը և մանրագնին ուսումնասիրել տապա- նագիրը: Պարզվում է՝ «**ԿՐԿԻՆ**»-ին հաջորդում է ոչ թե «**ԲԱՌԻԻ Դ** կամ **Կ**», այլ «**ՔԱՌԵԱԿ**» բառը, որը նշանակում է չորս⁵²: «**Ք**» գրի վերին ստեղծը բա- վականաչափ եղծված է, ինչը թյուրիմացության տեղիք է տվել, և այն «**Ք**» են կարդացել: Հիշյալ եզրույթի կապը շարադրանքի հետ կարելի է բացատրել այսպես. «...**ՀԱԶԱՐ ՀԱՐԻԻՐ ԸՆԴ ԵՐԵՄՆԻ, ԿՐԿԻՆ ՔԱՌԵԱԿ ԹԻԻ ՀԱՅ- ԿԱԶՆԻ**», այսինքն՝ զույգ չորս, կրկնակի չորս իմաստով, ուստի 1130 թվա- կանին, որը հստակ է, պետք է գումարել 8, կստացվի՝ 1138 + 551 = 1689: **Հե- տևաբար, Ստեփանոս վարդապետ Լեհացու մահվան ստույգ տարե- թիվը պետք է համարել 1689 թվականը:**

Այսպիսով, կարող ենք հավաստել, որ անվանի հոգևորական ու մշակու- թային գործիչ Ստեփանոս վարդապետ Լեհացին ապրել ու ստեղծագործել է 17-րդ դարում, ըստ ամենայնի՝ 1609-1689 թվականներին:

Summary

STEPHANOS ARCHIMANDRITE LEHATSI AND HIS EPITAPH

Arsen E. Harutyunyan

Stephanos Lehatsi is one of the famous clergymen, theologians, philologists and philosophers of the 17th century. He was born in Lvov. Since 1630's he arrived to Vagharshapat. Stephanos was ordained archimandrite by Philipos Catholicos (1632-1655) and he began religion activity. He translated a number of scientific, theological works from Latin and Polish into Armenian.

Tombstone of Stephanos Lehatsi is situated on the eastern side of St. Hrip- sime Monastery, but the date of death is almost illegible in the epitaph. Due to that reason a number of researchers noted the date of death approximately, especially in 1680-1699. Taking into account the above-mentioned facts, the gravestone was cleaned and the epitaph was investigated thoroughly. In the end of the investigation it was found out that exact date of death of Stephanos Lehatsi is 1689.

51 Ն. Ակինեան, Ստեփանոս վարդապետ Լեհացի, էջ 64:

52 Տեն Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝ Մու. Մալխասեանց, հ. չորրորդ, Եր., 1945, էջ 557: